

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԿԻԼԻԿԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@gmail.com

1909ի կիլիկեան կոտորածները ունեցած են աշխարհագրական ընդարձակ տարածք. անոնք ընդգրկած են Ատանայի ամբողջ նահանգն ու սահմանակից Հալեպ նահանգին կարգ մը շրջանները:

Օսմանեան Հալեպ Նահանգի Այնթապ Գաւառի Քիլիս Գաւառակի կեդրոն համանուն քաղաքը 1909ին ուղղակիօրէն կոտորածի չէ ենթարկուած: Անոր մօտակայ կարգ մը գիւղեր զերծ չեն մնացած ջարդերէն, սակայն եւ ունեցած են մարդկային ու նիւթական զգալի կորուստներ: Քանի մը քիլիսցիներ, որոնք գտնուած են Անտիոքի կողմերը, սպաննուած են: Աւարի տրուած են քաղաքէն դուրս, ճանապարհներու վրայ աշխատող քիլիսցի կառապաններէն շատերուն կառքերն ու ձիերը: Աւելի ետք անոնցմէ քիչ բան վերադարձուած է տէրերուն: Կոտորածներուն հետեւանքով այրիացած են քիլիսցի ինը կիներ¹, իսկ քաղաքէն դուրս, գաւառակի միւս աւաններուն մէջ, պատահած են մասնակի սպանութիւններ, կողոպուտներ ու աւերածութիւններ, որոնք բարեբախտաբար չեն վերածուած համընդհանուր կոտորածի, այնպէս՝ ինչպէս պատահած է Ատանայի ու Հալեպի նահանգներու հայաբնակ այլ վայրերու մէջ:

1909ին փորձեր եղած են Քիլիսի հայերը եւս կոտորելու, բայց տեղացի քանի մը արդարամիտ թուրքերու ջանքերով ու ճնշումներով կարելի եղած է կանխել աղէտը:

Թէպէտ կիլիկեան կոտորածներուն նուիրուած հայերէն եւ այլ լեզուներով առկայ է բաւական հարուստ գրականութիւն, սակայն Քիլիսին ու շրջակայքին յատկացուած բաժինները եղած են խիստ համեստ: 700 էջանի մեծածաւալ *Յուշամատեն Քիլիսի Հայոցը* եւս ժլատ գտնուած է եւ կիլիկեան կոտորածներու օրերուն Քիլիսի հայութեան նուիրած է ընդամէնը քանի մը տող՝ «...Երբ շրջակայ քաղաքներու հայութիւնը կը կոտորուէր ու կը ջարդուէր, Քիլիսի հայութիւնը կ'անցընէր սոսկումի ահազդեցիկ օրեր: Շուկաները գոցուած եւ ամէն մարդ իր տունը քաշուած՝ սպանդանոցի ոչխարներուն պէս իրենց տառապալի օրհասը կը սպասէին: Ժամ առ ժամ ահուդողի մէջ, կը սպասուէր ջարդի սկսելուն»²: Այսքան միայն, առանց այլ մանրամասնութիւններու:

Քիլիսի հայոց պատմութեան նուիրուած Ալիշան Պայրամեանի գիրքին մէջ եւս չեն արտացոլուած 1909ի դէպքերը³:

Այսօր, կիլիկեան կոտորածներէն աւելի քան դար մը ետք, տակաւին անոր մասին չիրապարակուած եւ չուսումնասիրուած արխիւային մեծաքա-

նակ նիւթ կայ հայ թէ օտար դիւանատուններու մէջ: Կոտորածներուն վերաբերող անտիպ փաստաթուղթերու հաւաքածոյ մըն ալ կայ Բերիոյ (Հալէպի) թեմի Ազգային Առաջնորդարանի դիւանատան մէջ, որմէ հրատարակութեան կու տանք Քիլիս Գաւառակի հայութեան առնչուող յետագայ ութը անտիպ փաստաթուղթերը, որոնցմէ եօթը գրուած են տեղւոյն առաջնորդական փոխանորդ Տէր Վահան Քինյ. Թովմասեանի կողմէ, իսկ ութերորդը՝ տեղւոյն քահանաներէն Տէր Սահակ Մոմճեանի կողմէ:

Հրատարակուող փաստաթուղթերը կը խօսին ոչ միայն գաւառակի հայաբնակ վայրերուն մէջ պատահած մասնակի սպանութիւններուն ու աներաժութիւններուն մասին, այլեւ մանաւանդ կ'անդրադառնան կոտորածներէն ետք ոճրագործներէն շատերուն ազատ-համարձակ վիճակին եւ պատասխանատուութենէ զերծ մնալուն, աղէտեալներէն կողոպտուած գոյքերն ու կենդանիները բռնագրաւուած պահելով իրենց տէրերուն չվերադարձուելուն եւ այս բոլորին մէջ պետական պաշտօնեաներու անտարբեր ընթացքին, ոճրագործները ձեռքալալելու ուղղութեամբ գործնական քայլերու բացակայութեան, աղէտեալներուն ըլլալիք պետական նպաստի դադրեցումին, պաշտօնեաներու կամայականութիւններուն եւ յարակից այլ հարցերու:

Վստահ ենք, որ առաջին անգամ գիտական շրջանառութեան դրուող այս նիւթերը նոր լոյս պիտի սփռեն ոչ միայն Քիլիսի պատմութեան անձանօթ որոշ դէպքերու վրայ, այլ նաեւ պիտի հարստացնեն ընդհանրապէս կոտորածներէն ետք Կիլիկիոյ մէջ տիրող ընդհանուր մթնոլորտին մասին մեր պատկերացումները:

Հոս հրատարակուող փաստաթուղթերէն քանի մը հատը անդրադարձած են նաեւ անմիջականօրէն կոտորածներուն չառնչուող այլ հարցերու, բայց մենք նախընտրած ենք փաստաթուղթերը հրապարակել ամբողջութեամբ, քանի որ շօշափուող այլ հարցերը եւս զուրկ չեն շահեկանութենէ ու կը ներկայացնեն պատմական որոշ արժէք եւ հետաքրքրութիւն:

Փաստաթուղթերը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան. պահած ենք անոնց լեզուական եւ ուղղագրական կարգ մը անհարթութիւնները, իսկ մեր կողմէ անւնցուած որոշ բառեր առած ենք փակագիծերու մէջ:

Փաստաթուղթերուն կցած ենք նաեւ անհրաժեշտ ծանօթագրութիւններ, ուր սակայն առանձին-առանձին չենք նշած 1915ին այստեղ յիշատակուող բնակավայրերու հայութեան վերապահուած ճակատագիրը, որով հետեւ բոլորի պարագային ալ նոյնն է այն՝ աքսոր, կոտորած եւ զինադադրին տասանորդուած վերապրողներու վերադարձ՝ հայրենի տուն:

Պատմական Քիլիս քաղաքը կը գտնուի դաշտային Կիլիկիոյ մէջ, Հալէպէն հիւսիս, անկէ 62 քմ. հեռաւորութեան վրայ, այժմու թուրք-սուրիական սահմանագիծին մօտակայքը: Քաղաքը ծանօթ է իր ձիթենիի պարտէզներով եւ ընտիր ձէթով:

Տեղւոյն հայերը ունեցած են Ս. Յովհաննու Կարապետ շքեղ եկեղեցին, բազմաթիւ վարժարաններ, մշակութային եւ բարեսիրական միութիւններ: Հայ կաթոլիկ եւ աւետարանական համայնքները եւս ունեցած են իրենց եկեղեցիները:

1902ին Քիլիսը ունցած է 600 տուն՝ 2556 հայ բնակիչ, մանչերու՝ 250 եւ աղջիկներու՝ 150 աշակերտուիներով ազգային զոյգ վարժարաններ: Ունեցած է 70 տուն՝ 354 կաթոլիկ եւ 60 տուն՝ 334 աւետարանական հայեր: Այս զոյգ համայնքները ունեցած են իրենց դպրոցները, որոնցմէ աւետարանականներունը ունեցած է 170 աշակերտ⁴: 1912ին քաղաքը ունեցած է 920 հայ տուն, որուն 60ը աւետարանական, 60ը կաթոլիկ, իսկ 800ը՝ առաքելական⁵, մինչ ցեղասպանութեան նախօրեակին, քաղաքի հայոց թիւը եղած է 7966⁶:

Քիլիսի հայութիւնը համիտեան կոտորածներու օրերուն անցուցած է մեծ փորձութիւն, երբ քաղաք հասած է Այնթապի հայոց կոտորածին լուրը (6 Նոյեմբեր 1895), եւ նոյն օրը բազմամարդ թուրք խուժան մը պատրաստուած է յարձակիլ քաղաքի հայկական թաղամասին վրայ, եւ ինչպէս պիտի գրէր դէպքերուն ականատես վկայ մը՝ «*Նոյեմբեր եօթի գիշերը, Քիլիսի հայերը հալեցան ու մաշեցան, առօրեան լոյսը տեսնելու յոյսը կորսուած էր...*»⁷, բայց եւ այնպէս յարձակումը տեղի չէ ունեցած եւ կոտորածը յետաձգուած է ժամանակաւորապէս:

Տեղւոյն մէջ, ջարդը սկսած է աւելի ուշ՝ 8 Մարտ 1896ին, որուն զոհ գացած են 75 հայեր: Անոցմէ 15 հոգի սպաննուած է քաղաքին մէջ, իսկ մնացեալները՝ շրջակայ այգիներուն, ծիթաստաններուն ու ճամբաներուն վրայ: Դէպքին կողոպտուած են նաեւ հայերու պատկանող բազմաթիւ տուներ: Տեղացի ուսուցիչ Սմբատ Ղազէլեան իր յուշերուն մէջ տուած է ցանկը իրեն ծանօթ 19 նահատակներու⁸:

Ա. Աշխարհամարտի զինադադարին, վերապրող քիլիսցիներ վերադարձած են հայրենի քաղաք ու վերաբացած են դպրոց ու եկեղեցի, բայց կարճ ժամանակ անց, թուրք-ֆրանսական պայմանագրով քաղաքը անցած է Թուրքիոյ եւ տեղւոյն հայերը 1922ին կրկին հեռացած են անկէ, ապաստանած Սուրիա եւ բնակած առաւելաբար Քիլիսի մօտակայ Ազազ ամանը, ուր աւելի ետք հիմնած են իրենց եկեղեցիներն ու դպրոցները:

Ա. Համար 19

9/22 Մայիս 1909

’Ի Քիլիս

Գերապատիւ

Տ. Շահէ Վարդապետ⁹ - Առաջնորդական տեղապահ

Բերիոյ եւ վիճակացն Ս. հայր

’Ի Հալէպ

Ազգախնամ Ս. Հայր,

Այսօր հասան պէյլիցի¹⁰ Յովսէփ անուն մի ազգային եկաւ տեղս, կինը եւ կնկան քոյրը միասին, խեղճեր ինչե՛ր կը պատմեն, մարդ կը սոսկայ լսելու, այսօր Պախճայի¹¹ մէջ 1700ի չափ հայ արկածեալ թշուառներ հաւաքուեր են, մեծ ու պզտիկ, այր ու կին, բոլորովին մերկ եւ անօթի, մինչեւ անգամ շատերը հիւանդ, անօթութենէ մեռնող անպակաս է եղեր, որովհետեւ կառավարութիւնը իւրաքանչիւրին չորս հինգ օր անգամ մը, հարիւր փարա¹² կու տայ եղեր, որպէս թէ անօթութենէ չը մեռնին, սակայն սղութիւն եղած տեղ մը, չորս հինգ օրուան մէջ, ութ մէթալիկով¹³ ինչպէ՛ս պիտի ապրի մարդ մը, որ ո՛չ բնակարան ո՛չ հագնելիք եւ ո՛չ խմելու մաքուր ջուր ունի, որովհետեւ սպաննելոց մարմինները ջրհորները լեցունելով ջրերն անգամ ապականած են, թէւ մահմետականաց թաղերու ջուրերը մաքուր է եղեր, բայց նոյն խեղճերու արգիլուեր է այն թաղերը երթալ: Խեղճերը՝ Ատանայէ եկած մի բժշկի միջնորդութեամբ ազատուեր են բանտէ երեք օր առաջ, ինչ արգահատելի վիճակ, Իսլահիյէի¹⁴ մէջ եւս 400ի չափ խեղճեր հաւաքուեր են:

7 Մայիս թուագրեալդ ստացանք:

Աղօթակից ձեր

Առաջնորդական փոխանորդ Քիլիսու

Վահան Քինյ. Թովմասեան¹⁵

Բ. Համար 25

20 Մայիս 1909

Ի Քիլիս

Գերապատիւ

Տ. Շահէ Վարդապետ - Առաջնորդական տեղապահ

Բերիոյ եւ վիճակացն բարեխնամ Ս. հայր,

Ի Հալէպ

Ազգասէր Ս. հայր,

Ա. Տեղոյս նպաստահաւաք մարմինը Հասան Պէյլիի եւ շրջակայ գիւղերու արկածելոցն ՚ի նպաստ հանգանակած 24 բեռ ուտեստ, զգեստ, պղնձեղէն եւայլն բաները Բշ. օրը յուղի դրաւ ՚ի Հասան Պէյլի, Այնթապու¹⁶ քահանաներէն Արժ. Տէր Մեսրոպ¹⁷ եւ Տէր Գարեգին¹⁸ հայրերու նախագահութեան ներքեւ կազմակերպեալ նպաստաբաշխ մարմնոյն միջոցաւ բաշխուելու համար: Այսօր քիլիսցի մեկաւ այն կողմէն, յիշեալ արկածեալներու թշուառութիւնը, այրի մնացեալ կանանց, որբոց եւ որբուհեաց անդադար թափած արտասուքները չըկրնար պատմել, «ցերեկը արեգական կիզիչ շոքին, իսկ գիշերները ցրտի երեսէն կրած նեղութիւննին անտանելի է» կ'ըսէ, որովհետեւ ո՛չ տուն, ո՛չ պատ մնացեր, ամէն ինչ մոխիր դարձեր եւ ո՛չ վրան մը տրուեր է, միայն ծառերու տակ պատսպարուած են, իւրաքանչիւրին ձեռքը հագիւ թէ մէկ կամ երկու չոր հաց կը տրուի եղեր իբր օրական պարէն:

Բ. Ամմոյեան Գէորգ անուն ազգային մը, 1212ին¹⁹ մահմետական կրօնքը ընդունած էր, երկու անգամ Մէքքէ²⁰ գնաց ուխտի, կարծեմ՝ երեք անգամ ալ ըստ մահմետական օրինաց մահմետական կանանց հետ ամուսնացաւ, սակայն իւր առաջին քրիստոնեայ կինը - Հաճի Ֆէրիտէ քրիստոնէութիւնը չը թողուց, մինչեւ հիմա քրիստոնէաբար կ'ապրի, թէեւ այն ժամանակի առաջնորդ Պետրոս հայր սուրբը²¹ արտօնեց յիշեալ կինը ամուսնանալ, որու հետ որ ուզէ, սակայն կինը ո եւ է մէկու մը հետ չուզեց ամուսնանալ, թրքացած էրիկն ալ փորձեց քանիցս նոյն կնոջն հետ ալ կենակցիլ, բայց կինը մերժեց: Այս օրերս թէեւ ուրֆացի²² թէրզի²³ Գէորգ անուն երիտասարդի մը հետ պսակուիլ կ'ուզէ, իսկ թրքացած էրիկը զայս լսելուն պէս տեղոյս մահքէմէի շէրիէին²⁴ դիմեր «իմ օրինաւոր կինս ուրիշի մը հետ ամուսնանալ կ'ուզէ եղեր, քանի որ ես զինքը օրինաւորապէս չեմ արձակած, եւ չեմ ուզեր արձակել, հետեւաբար ո եւ է մէկու մը հետ չը պսակուելուն համար, ըստ օրինի ինչ որ պէտք է ընել, ըրէք» ըսած է դատաւորին, ասոնք ալ «զմեզ պսակեցէք» կ'ըսեն, ի՞նչ կը հրամայէք, ձեր հայրական հրամանին կը սպասենք, որպէսզի, սա փափուկ ժամանակին խռովութեան մը պատճառ չըլլանք եւ պատասխանատուութեան չենթարկուինք, յիշեալ թրքացած մարդուն հիմա անունը Իպրահիմ Խալիլ է: Յիշեալ կնոջ կողմանէ քիլիսցի հայ փաստաբան Գէորգ էֆ. Շիլ Գէորգեան անուն ազգայինն փոխանորդ կարգուած էր այն ժամանակները, կարծեմ այս էֆէնտին սոյն խնդրոյ առթիւ ձեր սրբութեան հետ տեսնուած եւ խօսակցած է, այս օրերս կողմդ ըլլալու է եւ կրնաք խնդիրը մանրամասնաբար իրմէ հասկնալ:

Աղօթակից ձեր
Առաջնորդական փոխանորդ հայոց Քիլիսու
Վահան Քահանայ Թովմասեան

Գ. Համար 32

30 Մայիս 1909
'Ի Քիլիս

Գերաշնորհ

Տ. Շահէ Վարդապետ - Առաջնորդական տեղապահ

Բերիոյ եւ վիճակացն բարեխնամ Ս. հայր,

'Ի Հալէպ

Գերապատիւ Ս. հայր,

Ի նպաստ Անտիոքայ²⁵, Քեսապի²⁶ եւ շրջակայ գիւղերու արկածեալ քրիստոնէից, մեր հաւաքած նպաստէն 80 ութսուն հատ օսմ. ոսկին ըստ ձերոյ սրբութեան հրամանին՝ Անտիոքայ գերմանական հիւպատոսարանի մէջ գտնուող մեծ. Խոսրով էֆ. Միսաքեանի²⁷ հասցէին դրկեցինք, ներկայ թուականաւ եւ սուրհանդակաւ, խնդրելով որ հաճի սոյն դրամն անմիջապէս յանձնել Թաւուզճեան²⁸ եւ Կիլտալեան²⁹ քահանայ հարց, որպէսզի բաշխուի նոյն աղէտեալ վայրերու արկածելոցն առանց

խտրութեան հայ եւ հայ բողոքական ազգայնոց, զոր առ ի գիտութիւն ձերում հայրութեան եւս տեղեկագրել պատշաճ դատեցինք:

Աղօթակից ձեր
Առաջնորդական փոխանորդ հայոց Քիլիսու
Վահան Քահանայ Թովմասեան

Դ.

1909 Յուլիս 6 Քիլիս

Գերապատիւ
Շահէ Վարդապետ Գասպարեան
Հայրախնամ առաջնորդական տեղապահ հայոց Հալէպու եւ վիճակաց

Գերապատիւ հայր սուրբ

Այսօր կէսօրէն առաջ պիտի մեկնիմ ըստ Ձեր հրամանին, հազիւ այսօր յաջողցուցին երկար տնտնալէն յետոյ: Թորոս³⁰ եւ Աղէկ³¹ աղաները երբ լսեցին թէ Տէր հայրը եւ Թաղականութիւնը Ձեզի մերժողական պատասխան դրկած էին, շատ նեղացան եւ մեծ ցաւ զգացին, վերջապէս միասին ժողով կազմեցին այս առաւօտ յաջողցուցին:

Ձեր սրբութեան հրահանգին կ'սպասեմ Անտիոք, Ձեզի դրկած նամակներու պարունակութիւնը մեր մէջ խոստովանանք թող մնայ, պատռեցէք: Վերադարձիս յարմար կը տեսնա՞ք որ Հալէպու վրայով Քիլիս վերադառնամ:

Անտիոքէն եւ Քէսապէն Ձեզ նուէր պիտի դրկեմ թոյլ մը արտասուք այրի հայուհիներուն կողմանէ, փունջ մը տոջորած սրտերու, լալախառն ժպիտներ անտէր որբերէն, եւ շիշէ մը Գըրըզ Խանի³² եւ այլ աւերակներուն խանձողաց հոտ: Բարբարոսութեան զոհ քահանայից եւ ժողովրդեան ալ ոսկորներէն տոպրակ մը:

Քոյդ Ս. Քինյ. Մոմճեան³³

Անշուշտ Վեհափառ Կաթողիկոսին հարկ եղած յանձնարարականն ալ դրկած կ'ըլլաք:

Նոյն

Ե. Համար 61

11/24 Յուլիս 1909

Ի Քիլիս

Գերաշնորհ
Տ. Շահէ վարդապետ Առաջնորդական տեղապահ
Բերիոյ եւ վիճակացն բարեխնամ Ս. հայր
'Ի Հալէպ

Գերաշնորհ Ս. հայր,

Ֆասըլլըն³⁴ այրեացաւէր ընող Ռէշ աղա Ջատէ Օսման աղան, Էրզինէն³⁵ թէւ արծակուէր էր իբր անպարտ, սակայն Հալէպէն քաշուած մի հեռագրի վրայ կրկին բանտարկուած է, չենք գիտեր, կրկին արծակուելու պայմանաւ թէ ոչ, իսկ սորա համախոհները այսինքն զՖասըլլըն կործանելու միջոցին միասին գործող եւ խեղճ հայ ժողովուրդը ջարդող Խալիլ Պաթթաւ, Ճաֆէր աղա զատէ Օսման աղա, որք Մամիւլ ուշաքլի գիւղացիներ են, շատեանլը գիւղացի Տելի Միսթէ զատէ Հասան աղայի որդիք Պիլալ եւ Խալիլ, Գուրէ գիւղացի Պըլէ Ռէշէնին Օղլու Ապտոյի որդիք Հասան, Հայտար եւ Օսման, եւ հօրեղծօրորդին Ահմէտի Հաճի, արծակ համարձակ՝ հոս կը պտըտին աշար³⁶ առնելու պատրուակաւ, սոցա գլխաւորն եղող Փաշա Պէյ զատէ Ալի պէյ, ընդ հսկողութեամբ Էրզին տարուած ժամանակը փախած էր, լսեցինք թէ այժմ Քիլիսու Խաստըվանլը Շաշտարա կամ Ճօմ Մարաթա³⁷ գիւղը ապաստանած է: Գըրըզ Խանը մոխիր դարձնողներէն Շըխ Օմէրի եղբայր Հասան աղա եւ Իպրահիմ Խէժտինէ եւս ՚ի Քիլիս կը շրջագային, ո՛չ հարցնող կայ եւ ո՛չ փնտռող, սոյն Իպրահիմը Գըրըզ Խանի մէջ Մարտիկ Խանճեանի տղան սպաննելէն վերջը քովերնին գտնուած դրամներով հանդերձ կարի մեքենայ մ'եւս առեր է, որ տակաւին իր տունը կը մնայ եղեր:

Հայր ազգասէր,

Քանի որ սոյն հայակեր ոճրագործ մարդիկ ՚ի Քիլիս արծակ համարձակ կը շրջագային, եւ դիւրաւ կը ձերբակալուին, հաճեցէք սոցա ձերբակալման մասին եւս պէտք եղած դիմումն ընել ուր որ անկ է, ասոնք եթէ ձերբակալուին, իրենց ուրիշ համախոհներն ալ, որք տակաւին չեն ձերբակալուած, մի առ մի ցոյց կու տան:

Աղօթակից ձեր

Առաջնորդական փոխանորդ հայոց Քիլիսու

Վահան Քահանայ Թովմասեան

Զ. Համար 67

24 Յուլիս 1909 Քիլիս

Գերապատիւ

Տ. Շահէ Վարդ. Գասպարեան

Առաջնորդական տեղապահ Բերիոյ եւ վիճակաց

Բերիա

Ս. հայր,

Կիլիկեան արհաւիրքներու ժամանակ Գըրըզ Խան պատահած տխրասարսուտ դէպքին ատեն, քաղաքիս բնակիչներէն կառավար լեռնցի Կարապետ Խաչէրեան անուն ազգայինը եւս հոն սպաննուած է, որ վեց անդամներէ բաղկացեալ ընտանիքի մը տէր էր, այժմ այդ խեղճերը ծայրայեղ թշուառութեան մատնուած ըլլալուն Յուլիս Ցին տեղույս տեղակալութեան երբ դիմեցի՝ այդպիսի ընտանիքներուն օգնելու համար,

պատասխանեց թէ կուսակալութենէն կը հարցունենք, երէկ ըսաւ որ դեռ պատասխան մը չեկաւ, ուստի երկրորդ անգամ մ'ալ վաղը Հալէպ պիտի գրէ, այս եւ այսպիսիներուն համար հոտ կուսակալին մօտ Ձեր գերապատուութեան ջանքերը չի զլանալնուդ համար ջերմագին կը խնդրենք:

Աղօթակից Ձեր
Առաջ. փոխանորդ հայոց Քիլիսու
Վահան Քինյ. Թովմասեան

Է. Համար 69

30 [Յունիս]/12 Յուլիս 1909
'ի Քիլիս

Գերաշնորհ

Տ. Շահէ վարդապետ Գասպարեան - Առաջնորդական Տեղապահ
Բերիոյ եւ վիճակացն բարեխնամ Ա. հայր

'ի Հալէպ

Գերապատիւ Ա. հայր,

Իսլաիիէի Չըպըզ գիւղի բնակիչներէն Արապ Օսման եւ այժմ 'ի Քիլիս բնակող Աթմալը Մամօ անուն երկու մահմետականներու մասին տեղւոյս գայմագամին³⁸ դիմեցի առաջ բերանացի յետոյ գրաւորաւ, որք այն օրեր 'ի Քիլիս [կը] գտնուէին, եւ Հասան Պէյլիի կողմերը տեղի ունեցած թէ՛ աւարառութեան եւ թէ՛ ջարդին մասնակցած են եղեր, մինչեւ անգամ իրենց ձեռքը մի փոքրիկ ջորի եւ եօթը հատ կով ու եզ տեսնուած են, յիշեալ Մամօն մի քանի մարդոց քով աւարառութեան մասնակցած լինելն ալ պարծենալով խօսելէն 'ի զատ թէեւ խոստովանէր է, զօմիսէր Ռէշիտ էֆէնտիի խօսքին նայելով, եւ խնդրեցի որպէսզի նոյն յափշտակուած անասունք պահանջուին իրենցմէ, եւ երկուքն ալ դրկուին Իտարէի Էօրֆիէին³⁹, որոց վրայօք վկայելու համար մի քանի անձանց անուններն ալ թէեւ նշանակել տուի:

Քիլիսու շրջակայ Սալապիան անուն գիւղի մը բնակիչներէն շըխ ու ապիլէ⁴⁰ անուն երկու մահմետականներու քով յափշտակուած 15 եզ, 1 ջորի, 1 գըր պարկիր⁴¹, 1 էգ պօզ⁴² էշ, 5 ոչխար եւ 20 այծ գտնուիլը նոյն գիւղացի Թագաուտ Մահէմմէտի որդի Թէվֆիզ անուն մի մահմետական՝ ինձ լուր տուաւ, ես ալ գայմագամին հրամանաւ գօմսէրին⁴³ ներկայացուցի, որոյ խօսածները 'ի գրի առաւ: Դարձեալ Քիլիսու գիւղերէն Զատէլի անուն մի գիւղի պարտիզպան Սէֆէր անուն մարդու մ'ալ վկայութիւն տալու պատրաստ լինելը խօսեցանք եւ գրել տուինք, սակայն ո՛չ յիշեալ յափշտակուած անասունները ձեռք բերուեցան ո՛չ մարդիկ ձեռքակալուեցան, եւ ո՛չ վկաներու վկայութիւնները առնուեցան ցարդ:

Դարձեալ Պալը Եազըսը Հաճի Խալիլ Օպասը անուն գիւղի մը բնակիչներէն հաճի Խալիլի Օղլու Ալի անուն մի մահմետական՝ գայմագամին հրամանաւ գօմսէրին քովը ըսաւ թէ «Պօկաթ գիւղացի Քէլ Ալիի որդի Շըխօ եւ Գուրէ գիւղացի Հայտէր պինի Սիւլէյման անուն երկու

մահմետականներու բերնէն «Ֆասըլըն այրեցինք, մարդիկը սպաննեցինք եւ գտնուած գոյքերն ու անասունները յափշտակեցինք» ըսելին՝ լսեցի եւ գիղերնին ալ գացի, աչքովս տեսայ 60-70 ի չափ յափշտակուած անասուններ» ըսաւ, իրմէ զատ մի քանի վկաներու անուններն ալ թէեւ գրել տուաւ, բայց ցարդ ոեւէ գործադրութիւն չը տեսնուեցաւ, 47 համարաւ ձեզ ալ գրած եմ: Տաղլը փաշա պէյ զատէ Ալի պէյը, մարաթալը Մըսթաֆա էֆէնտիի քով ապաստանած ըլլալը, նոյնպէս Սինարա գիղի բնակիչներէն Ալի աղայի որդի Շըխ Մահէմմէտի մարդը եղող Մէճիտի եւ նոյն գիղի մըխթար Ապտոյի քով բազում յափշտակուած գոյքեր գտնուիլը, Բերիոյ հայոց Առաջնորդի դիմումին վրայ վիլայէթէն ձեզի քանիցս գրուած է, այն մարդոց տունները խուզարկուեցա՞ն, եւ իրենք ու Փաշա պէյ Ջատէ Ալի պէյը բռնուեցա՞ն, կամ սոցա ձերբակալման մասին ի՞նչ միջոցներ ՚ի գործ դրիք» ըսի երէկ գայմագամին. «անոնք իմ գիտնալիք բաներս են, մէկու մը չեմ կրնար ասոնց մասին բան մը խօսիլ» ըսաւ, կարծեմ ասոնց համար ալ բան մը ընելու դիտաւորութիւն չունի:

Գըրըզ Խանի ջարդի ժամանակ սպաննուած Մելքոնեան Պէտիկի եւ Խաչերեան Կարապետի թշուառ ընտանիքներու օգնելու մասին եղած հարցումը՝ տեղւոյս գայմագամի կողմանէ, երկրորդ դիմումիս վրայ 370 համարաւ ու Յուլիս 25ին տեղի ունեցած է, կը խնդրենք չըմոռնալ հետապնդել, վասնզի նոյն ընտանիքներ վերջին ծայր թշուառ են:

Մեր Թովմասին⁴⁴ համար ձեր սրբութեան ղրկելի յանձնարարականները չը հասան, Համբարձում էֆէնտին⁴⁵ երէկ մեկնեցաւ դէպ ՚ի Պոլիս, չը համարձակեցանք Թովմասը ուղեկից ընել տալ իրեն, առանց ձեր սրբութեան յանձնարարականներն ի ձեռին ունենալու: Լաւ ուղեկից մ'էր, կը յուսանք թէ կը հաճիք շուտով ղրկել, որպէսզի օր մը առաջ հասնի եւ քննութեան օրեր չանցած անունը նշանակել տայ քննուելի այլ ուսանողաց հետ, որովհետեւ քաջ գիտէք եթէ ուշանայ դժուարութեանց կը հանդիպի կամ չընդունուիր, լսեցի թէ Վեհափառ Կաթողիկոսը կողմդ եկած է, կ'աղաչեմ հայր որդեսէր, եթէ յարմար դատէք նորին Ս. Օծութենէ եւս մի յանձնարարական հաճեցէք առնուլ պատրիարքարան մատուցանելի, վասնզի սղութեան առթիւ նիւթապէս անձուկ վիճակ մ'ունիմ այս տարի, կարելի է, ձեր եւ Նորին Բարձր սրբազնութեան միջնորդութեան շնորհիւ մի քիչ օգնութիւն վայելեմ, եւ խելո՞՞ Թովմասս իր բաղձանացը մի քիչ գոհացում տայ, որով յանհունս շնորհապարտ կացուցանէք զիս եւ քիլիսեցուցս համար ալ մեծ բարիք մ'ըրած կ'ըլլաք:

Դպրոցական հոգաբարձութիւնը հաճեցաւ տարի մ'եւս շարունակել իւր պաշտօնը, բայց թաղականութիւնը կ'ամչնամ ըսելու, գրեթէ կազմալուծեալ վիճակի մը մէջ է, արդեօք Նորին Սրբազնութիւնը Քիլիս ալ պիտի այցելէ՞, եւ ե՞րբ, կը փութամ ներկայիս ՚ի համբոյր թէ՛ ձեր եւ թէ՛ Նորին Սրբազնութեան հայրական սրբածառ աջոյն:

Դպրոցական պիտճէին այս տարւան բացը 30 ոսկի պարտք ընելով գոցեցինք:

Աղօթակից ձեր
Առաջնորդական փոխանորդ հայոց Քիլիսու
Վահան Քահանայ Թովմասեան

Ը. Համար 73

Քիլիս 11 Օգոստոս 909

Գերապատիւ
Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեան
Առաջ. տեղապահ Բերիոյ եւ վիճակացն
Ի Հալէպ
Բարեջան հա՛յր,

Այսօր Հասան Պէյլիէն մարդ մը տեղս գալով սա տեղեկութիւնը հաղորդեց ինծի թէ յիշեալ գիւղին մէջ 50 տունը՝ որ 236 հոգիէ կը բաղկանայ, Շըխլիի պապական եկեղեցին դիմած են կրօնափոխութեան նպատակաւ եւ անունին իսկ արձանագրել տուած ՚ի շարս որոց է նաեւ զայս պատմողը՝ առարկելով թէ նպաստից յանձնաժողովի եւ տեղական կառավարութեան կողմանէ նպաստից արդարապէս եւ անաշառաբար բաշխումը կը զլացուի, եւ հայ երեւելիներէն ոմանք մակաբոյծներ կառավարութեան տուած նպաստից մի մասը շորթելով կ'իւրացնեն, փոխանակ հարկ եղած սատարն ու օժանդակութիւնը ընձեռելու թշուառներուն: Ուրիշ մի շատ ազգայինք եւս մտադիր են եղեր սոյն ընթացքին հետեւելու, ա՛լ Ձեզ կը մնայ պարտ ու պատշաճի տնօրինութիւնը:

Գալով մեր դպրոցական խնդրոյն, զաւակս Թովմասը Պոլիս դրկել կը փափաքէի իւր ուսումը կատարելագործելու համար, ինչպէս որ ծանօթ է Ձեզի եւս, եւ որուն համար յանձնարա[րա]գիր մը եւս շնորհեցիք՝ որով մեծապէս գոհ եւ երախտապարտ թողուցիք զմեզ: Սակայն մօտերս Պոլսոյ դպրոցաց մասին հարկ եղած ծանօթութիւնը ստանալով հասկցայ թէ այս մասին պէտք եղած դրամական գումարը անհամեմատաբար բարձր է մեր նիւթական համեստ մակարդակէն, առ այս սա որոշման գալ կ'ուզեմ, զինքը Հալէպի Իտատիյէին դրկել, հարկաւ դպրոցական հարկ եղած ծախսը եւ պարտքը վճարելու պայմանաւ, արդեօք այս դպրոցի մասին տեղեկութիւն ունի՞ք հաղորդելու մեզի, եւ յարմար կը դատէ՞ք, հայր որդեսէր, կը խնդրեմ յոյժ որպէսզի բարեհաճիք այս մասին եւս Ձեր հայրական բարձր հոգածութիւնները ընձեռել իրեն, ի պահանջել հարկին՝ որով անհունապէս երախտապարտ պիտի թողուք զմեզ⁴⁶:

Մնամ սիրոյ եւ երախտագիտական խորին զգացմանս հաւաստիքով
Աղօթարար եւ աղօթակից ձեր
Առաջն. փոխանորդ հայոց Քիլիսու
Վահան քահանայ Թովմասեան

- ¹ *Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 Սեպտ. 11-1912 Սեպտ. 11. Յանելուած Տեղեկագիր Քննիչ-Պարուիրակ Պ. Ժազ Սայապալեանի, Կ. Պոլիս, Տպարան Շանթ, 1912, էջ 25-26:*
- ² Համբարձում Պէրպէրեան եւ Խորէն Աազ Քինյ. Ներսէսեան, *Յուշամարտեան Քիլիսի Հայոց, Պէյրութ, Տպ. Սեւան, Հրատ. Հալէպի եւ Պէյրութի Քիլիսի Հայրենակցական միութիւններու, 1969, էջ 101:*
- ³ Ալիշան Ա. Պայրամեան, *Կիլիզա Հայկական Քիլիս, Երեւան, «Զանգակ 97» Հրատ., 2001:*
- ⁴ Միհրան Մինասեան, «Պատմական Անտիպ Տեղեկագիր Մը Բերիոյ (Հալէպի) Թեմի Հայութեան Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների, Երեւան, 2007, թիւ 1-2 (109-110), էջ 22:*
- ⁵ *Տեղեկագիր Այրիախնամ... էջ 25:*
- ⁶ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman a la Veille du Génocide*, Փարիզ, ARHIS Հրատ., 1992, էջ 323:
- ⁷ Պէրպէրեան-Ներսէսեան, էջ 70:
- ⁸ Նոյն, էջ 73, 90-91. նաեւ՝ Պայրամեան, էջ 90-91:
- ⁹ Տ. Շահէ Վարդապետ Գասպարեան (Այնթապ 1882-Խ. Հայաստան, 1935) (Գէորգ Ա. Սարաֆեան (աշխ. ու խմբ.), *Պարմութիւն Անթէպի Հայոց, Ա. Հոր., Հրատ.՝ Ամերիկաբնակ Այնթապցիներու Միութեան, Լոս Անճելըս, 1953, էջ 403-407. նաեւ՝ Վարդան Եպիսկ. Տէմիրճեան, Գաւազնագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց, Ա. Հոր., Անթիլիաս, 1980, էջ 292):*
- ¹⁰ Հասան Պէլլի՝ հայաբնակ մեծ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ (Ճեպէլ Պերեքէթ) Գաւառին մէջ, Օսմանիէ քաղաքէն հիւսիս 25 քմ. հեռավորութեան վրայ, Կիլիկիոյ հարաւ-արեւելքը (Հրաչիկ Սիմոնեան, *Հայերի Զանգուածային Կոորդաձները Կիլիկիայում, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2009, էջ 133-134. նաեւ՝ Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, Հայ Գողգոթան, Ա. Հոր., Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1922, էջ 373. նաեւ՝ Յակոբ Յ. Թէրզեան, Կիլիկիոյ Աղէտը, Տպագրութիւն Յ. Ասատուրեան եւ Որդիք, Կ. Պոլիս, 1912, էջ 208, 253):*
- ¹¹ Պաղչէ կամ Պուլանըխ՝ գիւղաքաղաք Կիլիկիոյ մէջ, Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառի Պաղչէ Գաւառակի կեդրոնը, Ճիհուն գետի ձախ կողմը, Ատանա քաղաքէն եւ Հասան Պէլլիէն հիւսիս-արեւելք, վերջինէն 2 ժամ հեռու (Թէրզեան, էջ 206-208, 252. նաեւ՝ Սիմոնեան, էջ 137-140, 283. նաեւ՝ Kévorkian-Paboudjian, էջ 301):
- ¹² Օսմանեան դրամական միաւոր, որ առաջին անգամ շրջանառութեան դրուած է 1520ին: 40 փարան կ'արժէր 1 դրուշ, իսկ մօտաւորապէս 127 դրուշը՝ 1 օսմ. ոսկի:
- ¹³ Օսմանեան դրամական միաւոր, որ պատրաստուած կ'ըլլար արծաթախառն պղինձէ:
- ¹⁴ Իսլաիիէ՝ գիւղաքաղաք Կիլիկիոյ մէջ, Տարոսեան Լեռներու վրայ, Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառի Իսլաիիէ Գաւառակի կեդրոնը (Պալաքեան, էջ 391. նաեւ՝ Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը, Պոստոն, Տպ. «Պահակ»ի, 1921, էջ*

18. Նաեւ՝ Raymond Kévorkian, *The Armenian Genocide A Complete History*, Լոնտոն-Նիւ Եորք, I. B. Tauris Հրատ., 2011, էջ 977):
- ¹⁵ Վահան Քինյ. Թովմասեան (Քիլիս, 1857-Հալէպ, 1923): Տէր Վահան քահանայի անդրանիկ որդին է հնչակեան 20 կախաղաններէն Թովմաս Թովմասեանը (Պէրպէրեան-Ներսէսեան, էջ 207-209. Նաեւ՝ Յուսիկ Ա. Քինյ. Սեդրակեան, *Վարք Քահանայից Բերիոյ Թեմի 1850-2005*, Ա. Հոր., Հալէպ, 2005, էջ 40-45):
- ¹⁶ Այնթապ՝ պատմական բերդաքաղաք դաշտային Կիլիկիոյ մէջ: Հալէպ Նահանգի Այնթապ Գաւառի կեդրոնը, Հալէպէն հիւսիս-արեւելք, մօտ 100 քմ. հեռաւորութեան վրայ (Սարաֆեան, էջ 87):
- ¹⁷ Մեսրոպ Քինյ. Տէմիրճեան (Այնթապ 1859-1909) (Սարաֆեան, էջ 475-476):
- ¹⁸ Տէր Գարեգին Ա. Քինյ. Պողարեան (Այնթապ, 1867-1946) (Գարեգին Ա. Քինյ. Պողարեան, «Ինքնակենսագրութիւն»՝ Գրիգոր Պողարեան, *Այնթապականք. Բ. Մահարձան*, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1974 (տիտղոսաթերթին վրայ՝ 1975), էջ 9-22): Պողարեան քահանայ հայրն է ծանօթ բանասէր Գրիգոր Պողարեանի (1897-1975) եւ ձեռագրագէտ Նորայր Արք.ի (Ծովական, 1904-1996):
- ¹⁹ Պիտի ըլլայ 1312: Իսլամական հիճրի տոմարով կը սկսի 4 Յուլիս 1894ին ու կ'աւարտի 22 Յունիս 1895ին:
- ²⁰ Իսլամութեան սրբազան քաղաքը Սէուտ Արաբիոյ մէջ, ուր կը գտնուին «Քա'պէ»ն եւ այլ սրբատեղիներ:
- ²¹ Հալէպի նախկին առաջնորդ, բնիկ ատաբազարցի Պետրոս Վրդ. Ներկարարեան, որ 1893ին (եւ ոչ 1894ին, ինչպէս կը կարծէ Սիւրմէեան Արք., որովհետեւ որպէս առաջնորդական փոխանորդ յիշուած է 25 Հոկտեմբեր 1893ին: Այս մասին տես՝ Բերիոյ Թեմի առաջնորդարանի դիւան, *Տեղոր Ազգային Քաղաքական Ժողովոյ Բերիոյ Սկսեալ 1889 Դեկտ. 15-է, 25 Հոկտեմբեր 1893ի նիստի ատենագրութիւն*) դարձած է Բերիոյ (Հալէպի) թեմի առաջնորդական փոխանորդ, ապա ընտրուած է առաջնորդ եւ պաշտօնի վրայ մնացած է մինչեւ 1904 (Արտաւազդ Արք. Սիւրմէեան, *Պատմութիւն Հալէպի Հայոց (Քննական) 1355-1908*, Գ., Փարիզ, Տպ. Արաքս, 1950, էջ 883-888):
- ²² Ուրֆա կամ Եդեսիա՝ պատմական քաղաք, համանուն անկախ գաւառի կեդրոնը: Հայկական Միջագետքի գլխաւոր ոստաններէն (*Հայկական Հարց Հանրագիտարան*, Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւն, Երեւան, 1996, էջ 450. Նաեւ՝ Արամ Սահակեան, *Դիցազնական Ուրֆան եւ Իր Հայորդիները*, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1955, էջ 612. Նաեւ՝ Kévorkian-Paboudjian, էջ 325):
- ²³ Թրքերէն՝ դերձակ:
- ²⁴ Շէրիի՝ իսլամական կրօնքի հիմունքներով գործող դատարան:
- ²⁵ Անտիոք՝ պատմական քաղաք Հալէպ Նահանգի Անտիոք Գաւառի կեդրոնը, Հալէպէն հիւսիս-արեւմուտք, մօտ 110 քմ. հեռաւորութեամբ, Որոնդէս Գետի ափին (*Տեղեկագիր 1909 Օգոստոս 7-1910 Դեկտեմբեր 31*, Կ. Պոլիս, Տպ. Օ. Արզուման, 1911, էջ 89, 94. Նաեւ՝ Հ. Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ Բնաշխարհիկ Բառարան*, Ա. Հոր., Բ. Տիպ., Վենետիկ-Սբ. Ղազար, 1903, էջ 220): Անտիոքը, 1939ին, ֆրանսեայրքական համաձայնագրով, Ալեքսանտրէթի ամբողջ գաւառին հետ, Սուրիայէն խլուելով՝ բռնակցուած է Թուրքիոյ:

- ²⁶ Քեսապ՝ զուտ հայաբնակ ասան Հալեպ Նահանգի Հալեպ Գաւառի Ճըսըր Շուղուր Գաւառակի մէջ, Կասիոս Լեռան հարաւային ստորոտին, Լաթաքիա Քաղաքէն հիսիս-արեւելք 60 քմ. հեռաւորութեամբ, այժմու թուրքեւտորիական սահմանագիծին մօտ (Kévorkian-Paboudjian, էջ 348):
Քեսապ ցարդ կը պահէ իր գոյութիւնը որպէս հայկական ասան ու կը համարուի Սուրիոյ զբօսաշրջութեան գլխաւոր վայրերէն մէկը:
- ²⁷ 19 Մայիս 1909ին ընտրուած է տեղւոյն Նպաստից Յանձնաժողովի գանձապետ (Ներսէս Աազ Քինյ. Թաւուգճեան, *Տառապանքի Օրագիր*, խմբ.՝ Թորոս Թորանեան, Պէյրութ, Տպ. Հայ Տիպ Քոմիիկրաֆ-Թեքնոփրես, 1991, էջ 19):
- ²⁸ Ներսէս Քինյ. Թաւուգճեան (Այնթապ, 1870-Հալեպ, 1934) (Սարաֆեան, էջ 469-472. նաեւ՝ Պողարեան, էջ 563-570): 1991ին լոյս տեսած է իր օրագրութիւններու հատորը՝ *Տառապանքի Օրագիր* (խմբ.՝ Թորոս Թորանեան), որ կ'ընդգրկէ անոր 1909-1933 տարիներու գրառումները:
- ²⁹ Վահան Քինյ. Կիլտաւեան (Այնթապ, 1877-Մ. Նահանգներ, 1945) (Սարաֆեան, էջ 477-479. նաեւ՝ Պողարեան, էջ 676-680): Կիլիկեան կոտորածներէն իր յուշերը գրի առած է առանձին յօդուածով մը՝ «Կիլիկիոյ Աղէտէն Վերջ (Վերլիշումներ)» (*Տաթեւ Տարեցոյց, Դ. տարի*, Հալեպ, 1928, էջ 232-240):
- ³⁰ Քիլիսի ծանօթ ազգային (Քիլիս մօտ. 1878-Տէր Զօր, 1915) (Պէրպէրեան-Ներսէսեան, էջ 264-268):
- ³¹ Քիլիսի ծանօթ ազգայիններէն եւ տեղւոյն թաղական խորհուրդի երկարամեայ անդամ Աղէկ Ենիգոմշուեան (Քիլիս, 1860-) (Պէրպէրեան-Ներսէսեան, էջ 177, 506):
- ³² Գըրըգ Խան՝ հայաբնակ գիւղ Հալեպ Նահանգի Հալեպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւելք, Ալեքսանտրէթի ու Հալեպի միջեւ (*Տեղեկագիր Այրիախնամ...*, էջ 5. նաեւ՝ Թէրզեան, էջ 267. նաեւ՝ *Տեղեկագիր 1909...*, էջ 89, 94-95. նաեւ՝ Kévorkian-Paboudjian, էջ 351):
- ³³ Սահակ Քինյ. Մոմճեան (Այնթապ 1867-Հալեպ, 1915) (Պողարեան, էջ 135-138. նաեւ՝ Սարաֆեան, էջ 466-467):
- ³⁴ Ֆասըլը կամ Էյրի Պուճաք՝ հայաբնակ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառի Էրզին Գաւառակին մէջ, Չորք Մարգպանէն 10 ժամ արեւելք (*Տեղեկագիր Այրիախնամ...*, էջ 75. նաեւ՝ Սիմոնեան, էջ 125):
- ³⁵ Էրզին՝ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառի Էրզին Գաւառակի կեդրոնը, Ատանա քաղաքէն հարաւ-արեւելք (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Բ. Հտր., Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1988, էջ 365):
Երբ նամակագիրը հոս կ'ըսէ թէ «Էրզինէն արձակուեր էր իբր անպարտ», նկատի ունեցած է Էրզին հաստատուած պատերազմական ատեանի որոշումը:
- ³⁶ Արաբերէնէն փոխառեալ թրքերէն՝ տասանորդի տուրք:
- ³⁷ Հաւանաբար նկատի ունի այժմու Սուրիոյ Աֆրին քաղաքէն հիսիս-արեւմուտք գտնուող Մարաթ կամ Մարաթա գիւղը, որ կը գտնուի Քիլիսէն 15-20 քմ. հարաւ: 20րդ դարասկզբին քրտաբնակ էր: Գիւղը կը կարծուի ըլլալ ծննդավայրը 12-13րդ դարերուն ապրած առակագիր Վարդան Այգեկցիի, որ յիշեալ գիւղի անունով կոչուած է նաեւ Մարաթացի:

³⁸ Արաբերէնէն փոխառեալ թրքերէն՝ գաւառակի կառավարիչ, գաւառակապետ:

³⁹ Պատերազմական ատեան:

⁴⁰ Հաւանաբար պիտի ըլլայ «Շէյխուլ քապիլէ», որ արաբերէն կը նշանակէ աշիրէթապետ:

⁴¹ Հաւանաբար թրքերէն՝ փոքր ջորի:

⁴² Թրքերէն՝ գորշ:

⁴³ Ոստիկանապետ:

⁴⁴ Նկատի ունի իր զաւակը՝ Թովմասը, հնչակեան 20 կախաղաններէն մէկը (Քիլիս, 1889-1915, պայագիտի հրապարակ) (Պէրպլերեան-Ներսէսեան, էջ 102-105), տե՛ս ծնթ. 15:

⁴⁵ Քիլիսի ազգային ծանօթ դէմքերէն, իրաւաբան Համբարձում Պէրպլերեան (Քիլիս, 1879-Հալէպ, 1970ականներ) (Սարգիս Ղազարեան, *Հայկական Փոքր Գաղութներ. Ազգ Աֆրին Արաբ-Փունար*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1965, էջ 98-99. նաեւ՝ Պէրպլերեան-Ներսէսեան, էջ ԺԱ-ԺԴ): Հեղինակած է *Յուշամատենան Քիլիսի Հայոց* հատորը, զոր կիսատ ձգելով զայն ամբողջացուցած եւ հրատարակութեան յանձնած է Խորէն Աւագ Քինյ. Ներսէսեանը (Պէյրութ, Տպ. Սեւան, 1969):

⁴⁶ Թովմաս Թովմասեան ուսումը չկրցաւ շարունակել Կ. Պոլսոյ մէջ, այլ շարունակեց Հալէպ:

UNPUBLISHED DOCUMENTS ON THE CONDITION OF THE KILIS ARMENIANS
DURING AND AFTER THE 1909 ADANA MASSACRES
(Summary)

MIHRAN MINASIAN
mihran.min@gmail.com

Very little is known about the hardships and massacres the Kilis Armenians faced during the Adana Massacres of 1909. Though the town itself was not attacked, at least nine Kilis Armenians who were out of the town were attacked and killed. In addition, the neighbourhood and the surrounding Armenian villages and towns were attacked and many Armenians were killed, villages burnt and belongings looted.

The documents, eight letters in total, were written between May and August 1909, and all are addressed to Father Shahe Kasbarian, the vice-prelate of Aleppo. Seven of the letters were written by Fr. Vartan Tovmassian, the vice-prelate of the town of Kilis.